ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՈՍԿԵՏԱՓԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 07

12 հունվար 2012թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊՐՆ. Է. ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ

Հարգելի պրն. մարզպետ.

Դեկտեմբերի 23-ին Ոսկետափ համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որին մասնակցում էին համայնքի ղեկավարը, աշխատակազմը, ավագանու անդամները, դպրոցների տնօրենները իրենց մանկավարժական խորհուրդների կազմով, մանկապարտեզի աշխատակիցներ, բուժ. անձնակազմը և համայնքի բնակիչներ:

Լսումների ժամանակ համայնքի ղեկավարը զեկույցով ներկայացրեց մեկ տարվա կատարված աշխատանքները՝ Շիրազի և Հ. Աբելյան փողոցների մի հատվածի լուսավորության անցկացման աշխատանքներ /2մլն դրամ/, բազմահարկ շենքի հանդիսությունների սրահի և համայնքի վարչական շենքում գտնվող տարեցների համար նախատեսված ժամանցի սենյակի վերանորոգման աշխատանքներ /4.511հզ դրամ/, մանկապարտեզի սանհանգույցի և խոհանոցի վերանորոգման աշխատանքներ/ 4.246.5 հզ դրամ/, Իգոր Հակոբյան, Բագրատունյաց և Երևանյան խճուղու 2-րդ փակուղի փողոցների խճապատման աշխատանքներ/4.138.5 հզ դրամ/, մշակույթի տան պատուհանների վերանորոգման աշխատանքներ / 2.855 հզ դրամ/:

Տրվել են համայնքի սոցիալապես անապահով 259 ընտանիքներին դրամական օգնություն 6.100 հզ դրամ, հուղարկավորման նպաստ 28 ընտանիքի 1.92 հզ դրամ, նորածին ունեցող 46 ընտանիքներին դրամական օգնություն 920հզ դրամ, զոհված ազատամարտիկների ընտանիքներին 480.0 հզ դրամ, երկրապահ կամավորականների 34 ընտանիքներին 790.0հզ դրամ, անապահով ընտանիքների 6 ուսանողներին ուսման վարձ 295.0 հզ դրամ:

Զեկուցողը ներկայացրեց համայնքի 2011թ. բյուջեի կատարողականը հետևյալ կերպ.

Կատարողական %	Պլան		Փաստացի
Հողի հարկ	18.300.00	19,907.34	108.8
Գույքահարկ	4.735.00	5.003.02	105.6
Հողի վարձավճար	3.100.00	3.333.32	107.5
Այլ մուտքեր	200.0	215.80	107.5

Տեղական տուրք	640.00	882.45	137.8
Ընդամենը՝	79073.0	82.175.11	103.9

Համայնքի ղեկավարը իր զեկույցում ներկայացրեց, որ կատարվել են շատ աշխատանքներ, բայց կան նաև խնդիրներ ոռոգման համակարգերի, աղբահանության, խմելու ջրագծերի վերանորոգման հետ կապված, որոնք պետք է լուծվեն 2012թ.-ի ընթացքում: Եղան առաջարկություններ փողոցների լուսավորության, խմելու ջրագծերի վերանորոգման, փողոցների խճապատման համար, որոնք պետք է ներգրավվեն 2012թ. բյուջեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ